# ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի շրջափակման պրոբլեմին առնչվող կրքերի բորբոքման աստիճանով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անցած երեքշաբթի կայացած նիստը թերևս իրեն հավասարը չուներ: Ինչպես արդեն հաղորդվել է, շաբաթվա առաջին օրը նստաշրջանը վերջնական որոշում չընդունեց, իսկ երեքշաբթի անմիջապես շարունակվեց տրանսպորտի աշխատանքի կայունացման վերաբերյալ կառավարության առաջարկությունը, այդ թվում նաև գործադուլների պրոբլեմի քննարկումը:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Լ. Հարությունյանը առաջարկեց առանձնացնել Հայաստանի շրջափակման հարցը: Շրջափակումը և գործադուլը,— ասաց նա,— առաջին հայացքից թվում են փոխկապված: Բայց իրականում դրանք հակադիր են իրենց էությամբ: Եթե գործադուլը դեմոկրատական ավանդույթներին է մոտենում որպես աշխատավորության իրավունքների պաշտպանության միջոց, ապա շրջափակումը սկիզբ է առնում դեմոկրատիայի խեղդման քարանձավային մեթոդներից: Այն, ինչ անում է ադրբեջանական կողմը Հայաստան տանող ճանապարհներին, քաղաքական ահաբեկման միջոց է: Կարծում եմ, որ Գերագույն խորհրդի անդամները այնքան էլ միամիտ չեն, որ չհասկանան ամբողջ հանրապետության տնտեսական խեղդման նախաձեռնողների նպատակները ու միջոցները:

Հայաստանի տնտեսական շրջափակման հարցը հարկավոր է առանձին քննարկել, քանի որ հանրապետության ներկայիս արտակարգ իրադրությունը հրամայաբար պահանջում է ոչ պակաս արտակարգ միջոցների ձեռնարկում: Հայաստանում դրամատիկ վիճակ է ստեղծվել. հումք չկա արդյունաբերության համար, չկա պարենը, չկա վառելիք: Աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած մարդիկ հասցվել են ծայրահեղ վիճակի: Եվ սա արվում է ամբողջ աշխարհի աչքի առաջ:

Լ. Հարությունյանը առաջարկեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ դատապարտել շրջափակումը: Ոչ թե ադրբեջանական ժողովրդին, ընդգծեց նա, այլ հենց շրջափակումը որպես ճնշման միջոց և դրա կազմակերպիչներին: Պառլամենտը պարտավոր է հստակորեն և պարզ կերպով ասել, որ ինքը մեր երկրում չի հանդուրժի վիճելի հարցերի լուծման այդպիսի ծովահենային մեթոդներ, որ ինքը վերջապես կարող է պատժել նրանց, ովքեր իրենց իրավունք են վերապահում խեղդելու Հայաստանը և ԼՂԻՄ-ը:

Ելույթ ունեցողը անհամաձայնություն հայտնեց ներկայացված որոշման նախագծի որոշ դրդեպներին: Նիրանում միայն կոչեր են, ասաց նա, մինչդեռ անհրաժեշտ է ձեռնարկել ազդու և արտակարգ միջոցներ:

Հայ դեպուտատների դիրքորոշումը արժանացավ շատ պառլամենտականների պաշտպանությանը: Այսպես, օրինակ, դեպուտատ Սոբչակը պաշտպանեց Հայաստանի իր գործընկերներին, իսկ ակադեմիկոս Ա. Սախարովը իր անհամաձայնությունը հայտնեց այն բանին, որ Հայաստանի շրջափակումը փորձում են քննարկել առաջարկությունների ընդհանուր ծրարում:

Ծագած պրոբլեմի նկատմամբ Ադրբեջանի ներկայացուցիչների մոտեցումը գլխավորապես արտահայտվեց հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովի և Ադրբեջանի գրողների միության վարչության նախագահ Անարի ելույթներում:

Քննարկվող հարցի վերաբերյալ Գերագույն խորհրդի առաջարկած նախագծում, ասաց դեպուտատ Ս. Համբարձումյանը չեն արտացոլվել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության՝ նախագահ Հ. Ոսկանյանի ելույթում արված առաջարկությունները:

Նա բարձրացրեց ոչ միայն Ադրբեջանական ԽՍՀ-ի տեղամասի երկաթուղու, այլև ինչպես Հայաստան, այնպես էլ ԼՂԻՄ-ի հայաբնակ շրջաններ տանող բոլոր ավտոճանապարհների անհապաղ ապաշրջափակման հարցը: Նա ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կոչ արեց սկզբունքային գնահատական տալ շրջափակմանը՝ այդ խայտառակ երևույթին:

— Դեպուտատ Վեզիրովի ելույթը ինձ պարտավորեցնում է պարզություն մտցնել որոշ հարցերում,— ասաց ժողովրդական դեպուտատ Զ. Բալայանը:— Գրեթե երկու տարի շարունակ խոսվում է ադրբեջանցի գաղթականների մասին, բերվում են թվեր, որոնք բնութագրում են նրանց ներգաղթը Ադրբեջան: Ես կցանկանայի, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գ. Տարազևիչը տեղեկանք տար, թե քանի հայ է մեկնել Ադրբեջանից և քանի ադրբեջանցի է հեռացել Հայաստանից, թե նրանք ինչ փոխհատուցում են ստացել: Նախքան նրա պատասխանը հաղորդեմ. ադրբեջանցիներին հատկացվել է 70 միլիոն ռուբլի: Ադրբեջանից հարկադրաբար հեռացած հայերին ոչ մի կոպեկ չի վճարվել: Ն. Ի. Ռիժկովի հաղորդած տվյալներով, Հայաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով անօթևան է մնացել 700 հազար մարդ: Ներկայումս այդ թվին ավելացել են ևս գրեթե 300 հազար հայեր, որոնք վտարվել են Ադրբեջանից: Փաստորեն Բաքվից բոլոր հայերը տեղահանված են...

Ապա Զ. Բալայանը նշեց, որ 1979 թվականի մարդահամարի տվյալներով, Ադրբեջանական ԽՍՀ-ում 475 հազար հայ էր ապրում: Իսկ այսօր ԼՂԻՄ-ում մնացել է 150 հազար հայ և մոտ 30 հազար հայ՝ Ծահուքյանի շրջանում: Չարդախլու գյուղում, որը տվել է երկու մարշալ, Խորհրդային Միության երեք հերոս և ռազմանակատ է ուղարկել 250 զինվոր, ոչ մի հայ չի մնացել:

Այս օրերին, երբ Մոսկվայում աշխատում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը, շարունակեց հոստորը, «Մոսկվա» հյուրանոցի նախասրահները լեփ լեցուն են Ադրբեջանից գաղթած հայերով: Նրանք երեխաների հետ տեղավորվում են ճեմասրահներում, իսկ աչալուրջ միլիցիոներները հետևում են, որ նրանք չբարձրանան հարկաբաժիններ: Օթևանից և կայքից զրկված գրեթե վեց հազար մարդ տասն ամիս շարունակ բախում են մայրաքաղաքի պաշտոնյաների դռները օգնություն ստանալու հույսով: Իսկ այդ ժամանակ Ադրբեջանում, Հայաստանից մեկնած յուրաքանչյուր ադրբեջանցու երկու մահճակալ է հասնում:

Ներկայումս շրջափակման մեջ է ոչ միայն Հայաստանը, այլև ԼՂԻՄ-ը: Կյանքի միակ ճանապարհը, որը կարող էր ԼՂԻՄ-ը կապել արտաքին աշխարհի հետ՝ Գորիս—Լաչին—Ստեփանակերտը, 1988 թվականի մարտի 24-ի որոշմանը հակառակ, որի տակ դրված են Մ. Ս. Գորբաչովի և Ն. Ի. Ռիժկովի ստորագրությունները, չի վերանորոգվում: Չի վերականգնված այդ ճանապարհի և ոչ մի մետրը: Այսօր Ղարաբաղը գտնվում է ոչ թե շրջափակման, այլ պաշարման մեջ:

Հանձնաժողովում գրեթե երեք ժամ տևած քննարկումից հետո Գերագույն խորհրդի հաստատմանն առաջարկվեց «Երկաթուղային տրանսպորտի և ժողովրդական տնտեսության բազային ճյուղերի անխափան գործունեության ապահովման որոշ միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

**Լ. ԱԶՐՈՅԱՆ**
**Զ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆ**
**(Արմենպրեսի հատուկ թղթակիցներ)**